ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻՑ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2012 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Զեկ. Համայնքի ղեկավար Ե. Կարապետյան

Ժողովին մասնակցում էին 41 մարդ.

Համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը, ժողովի մասնակիցներին նախ և առաջ իրազեկեց, որ չնայած առկա դժվարություններին վերջին տարիներին կարծես թե ավանդույթ է դարձել համայնքի բյուջեի պարտադիր կատարումը, հատկապես շեշտը դնելով սեփական եկամուտների հավաքագրման ապահովման վրա: Այնպես որ չնայած կիսամյակի կտրվածքով այս պահի դրությամբ առկա մի շարք ցածր ցուցանիշների առկայությանը, այնուամենայնիվ նա հավաստիացրեց, որ 2012 թ բյուջեն դարձյալ կկատարվի:

Այնուհետև Ե. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որը կազմում է շուրջ 90.0% հանգամանք, որը խիստ դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը: Մասնավորապես նշվեց, որ 2012 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը եկամուտների գծով կազմում է 97.1% , որից սեփական եկամուտների գծով կազմում է 86.5%:

Համայնքի 2012 թվականի բյուջեի եկամուտների կատարողականը կիսամյակի կտրվածքով հետևյալ պատկերն է ներկայացնում

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված / հազ. դրամ/	Փաստացի / հազ. դրամ/	կատարման %-ը
Ընդամենը եկամուտներ	23362.1	22676.7	97.1

Որից սեփական	5073.2	4387.7	85.5
Հողի հարկ	1795.0	1124.7	62.7
Գույքահարկ	2885.0	1664.9	57.7
Տեղական տուրքեր	230.5	1054.3	45.7
Այլ եկամուտներ/հողի օտարում/	----------	1492.9	----------

Այնուհետև համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Տարրական դասարանների շուրջ 65 աշակերտների համար ամանօրյա համերգի մասնակցություն մարզահամերգային համալիրում:
2. Ամանօրյա տոնական նվերների բաժանում 135 աշակերտների և տոնական միջոցառման / ներկայացման/ կազմակերպում:
3. Կանանց մեկամսյակի առթիվ միջոցառումների կազմակերպում գյուղապետարանի, դպրոցի և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կին աշխատակիցների համար տոնական նվերների բաժանումով:
4. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ -ում կազմակերպված տարատեսակ միջոցառումներին:
5. Համայնքի դպրոցի, գյուղապետարանի և նրա ենթակայության շուրջ 55 աշխատակիցների մեկօրյա հանգստի կազմակերպում Սյունիքի մարզում:
6. Համայնքի ազգաբնակչության մի հատվածին /Կոմիտաս փողոց/ ոռոգման ջրի մատակարարման ջրագծի հիմնանորոգում, երկաթյա խողովակների փոխարինում նորով:

7 «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակի բարեկարգում, խոհանոցային հատվածի մուտքի աստիճանների հիմնանորոգում,շքամուտքի տամդուռի տեղադրում, բակում մանկական խաղերի տեղադրում:

7. Մանկապարտեզի համար նոր մահճակալների, անկողնային պարագաների /ադիալների/ , մեծ խմբաքանակի գույքի /գրասեղան, սեղան, մանկական աթոռ, սեղան/ և այլ պարագաների ձեռք բերում:
8. «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի առաջին և երկրորդ հարկերի նախկինում չփոխարինված դռների և պատուհանների փոխարինում նոր մետաղապլաստե դռներով և պատուհաններով:

Համայնքի ղեկավարը հարկ համարեց նշել, որ համայնքը իր պատրաստակամությունն է հայտնել մասնակցելու ներտնտեսային ոռոգման ցանցի հիմնանորոգման որևէ ծրագրի համաֆինանսավորման սկզբունքով:

Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չնայած կատարված զգալի աշխա -

տանքներին, այնուամենայնիվ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող մի շարք հիմնախնդիրներ, որի մեծ մասը համայնքը ի զորու չի իր սուղ միջոցներով իրականացնելու՝ դրանք են.

ա/ Համայնքի ներտնտեսային փողոցների վատթար վիճակը

բ/ Ոռոգման և խմելու ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը

գ/ Դպրոցում մարզադահլիճի բացակայությունը

դ/ Համայնքի մշակույթի տան և մանկապարտեզի շենքի վերանորոգման հրատապությունը և այլն:

Ելույթ ունեցան նաև դպրոցի տնօրեն Վ. Քոշյանը և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ս. Ասատրյանը, որոնք իրենց խորին երախտագիտություն արտահայտեցին գյուղապետարանի աշխատակազմին, հատկապես համայնքի ղեկավար Ե. Կարապետյանին իրենց ղեկավարած ոլորտների հանդեպ ցուցաբերած ամենօրյա հոգատարության և նյութական ու բարոյական շարունակական աջակցության համար:

Վերջում համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետ ևս ավագանու, գյուղապետարանի աշխատակազմի և անձամբ իր կողմից հնարավոր ամեն ինչ կարվի համայնքի առջև ծառացած խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնարավորինս լուծում տալու համար:

Համայնքի ղեկավար Ե. Կարապետյան

10-ը հուլիսի 2012 թվականին գ. Նորակերտ